ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

0010 ք. Երևան, Կառավարական տուն 1

№ 02/05.5/33723-2023

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ-ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
ԴԱՎԻԹ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ

Հարգելի՛ պարոն Առաքելյան,

Ձեզ ենք ներկայացնում Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի (Կ-611-06.06.2023-ՊԻ-011/1) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունները, լրամշակված նախագիծը, ամփոփաթերթը, ինչպես նաև նախագծում կատարված փոփոխությունների վերաբերյալ տեղեկանքը՝ գլխադասային հանձնաժողովում քննարկելու համար.

1. Իրավական որոշակիություն ապահովելու և գործնականում հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջարկում ենք «Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծով սահմանված կարգավորումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին:

Ըստ այդմ առաջարկում ենք նախագծի՝

1) 1-ին և 2-րդ հոդվածներում՝ «15-րդ հոդվածի 1-ին մասի» բառերից հետո լրացնել «1-ին կետի» բառերը,

2) 3-րդ հոդվածում՝ «15-րդ հոդվածի 4-րդ մասի» բառերը փոխարինել «15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի» բառերով,

3) 4-րդ հոդվածում՝ «15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 10-րդ մասով» բառերը փոխարինել «15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով» բառերով:

2. Նախագծի 6-րդ հոդվածի «օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրվանից մեկ ամիս հետո» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը:

Հարգանքով՝

ԱՐԱՅԻԿ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ